ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 12004/Մ- 10-10

ք. Երևան «30» հունվարի 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Ղարիբյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Գորիսի պետական համալսարանը (այսուհետ՝ Բուհ), ի դեմս ռեկտոր Տիգրան Վանդունցի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով և ՀՀ կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «ՀՀ 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում)՝ 1111 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի 12004 «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» միջոցառման իրականացման նպատակով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի № 621-Լ որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ որոշմամբ սահմանված 1111 «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի 12004 «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) շրջանակներում, կազմակերպել մասնագիտական գործունեությունը դադարեցված բարձրագույն կրթություն չունեցող 11 մանկավարժների ուսուցում.

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն Պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 1.1 կետում նշված ուսանողների համար Կատարողին տրամադրել պետության կողմից նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում, որը կազմում է 1880000 (մեկ մի;իոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառելով.

2.2. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված գումարը Պատվիրատուն վճարում է Կատարողի հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով:

2.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջին տարեկան ուսանողների թիվը փոխվելու դեպքում Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու Կատարողի կողմից իրականացվող միջոցառումների

ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

3.1.2. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

3.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կատարողից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժերը,

3.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի Կատարողը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կատարողը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ժամկետները,

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում սահմանված պահանջներին,

3.1.5. Կատարողի կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

3.1.6. Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարման դեպքում պահանջել հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնել հետագա ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնել ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

3.1.7. սույն պայմանագրի 3.4.7. կետով սահմանված կարգով և ժամկետներում Կատարողի կողմից հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը:

3.2. Կատարողն իրավունք ունի՝

3.2.1. Պատվիրատուից պահանջել ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

3.2.2. Պատվիրատուից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ՝ սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

3.2.3. իրականացված միջոցառման արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունվելու և Պատվիրատուի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

3.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

3.3. Պատվիրատուն պարտավոր է՝

3.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և Կատարողի կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել Կատարողին, այդ թվում՝ Կատարողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

3.3.2. Կատարողից ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

3.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման Կատարողին՝ լրամշակման համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

3.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1 կետի և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ) և պետական կրթաթոշակ տալու կարգի, ինչպես նաև նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման չափի պահանջների,

3.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները՝

3.4.3. Պատվիրատուին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

3.4.4. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

3.4.5. կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

3.4.6. իրականացնել ծրագրի շրջանակներում Պատվիրատուի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

3.4.7. Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

3.4.8. Պատվիրատուի կողմից միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2 Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պատվիրատուին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.3 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառման իրականացման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագրում և նրա անբաժանելի մասը կազմող հավելվածում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից,

7.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ,

7.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011048247 ՀՎՀՀ 02704199	Գորիսի պետական համալսարան ք.Գորիս, Ավանգարդ 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900288000012 ՀՎՀՀ 092106063
Գլխավոր քարտուղար՝	Ռեկտոր՝
Կ. Ղարիբյան (ստորագրություն) (պարտականությունները կատարող)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
պայմանագրի

N 12004 /Մ

Բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժների օժանդակության ծրագրին մասնակցող անձանց անվանացանկ (2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակ)

N	Բուհի անվանումը	Ազգանուն Անուն Հայրանուն	Ավարտած ուսումնական հաստատությունը, մասնագիտությունը	Աշխատանքի վայրը և զբաղեցրած հասարակ	Բուհի մասնագիտությունը/կրթական ծրագիրը	Բուհ ընդունվելու ուսումնական տարին, կիսամյակը, կուրսը	2025/2026 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնառության կուրսը	2025/2026 ուստարվա 1-ին կիսամյակում ուսումնառության ՄՈԳ-ը*	2025/2026 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսման վարձավճարի չափ /ՀՀ դրամ/
1	ԳՊՀ	Քարամյան Արմեն Վենդենի	Երևանի N 27 ՍՊՏՈՒ, վաճառող	Սյունիքի մարզի «Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝որպես շախմատի ուսուցի	Մասնագիտական մանկավարժություն, Պատմություն	2024թ. 1-ին կիսամյակ, 2-րդ կուրս	3-րդ	73.25	160 000
2.	ԳՊՀ	Գասպարյան Գոհար Գագիկի	Կապանի պետական ճարտարագիտական քոլեջ, ՊՈԱԿ, Դասավանդում տարրական դասարաններում	ՀՀ Սյունիքի մարզի «Եղվարդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, որպես դասվար	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ, 2-րդ կուրս	3-րդ	90.5	175 000
3.	ԳՊՀ	Արզումանյան Անժիկ Ժորայի	Գորիսի մանկավարժական համալսարան, Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում դասավանդում	«Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, որպես լաբորանտ	Մասնագիտական մանկավարժություն, Հայոց լեզու և գրականություն	2024թ. 1-ին կիսամյակ, 2-րդ կուրս	3-րդ	90.0	160 000
4.	ԳՊՀ	Դաբուեց Ռաիսա Սամսոնի	Երևանի Ն.Օվսեփյանի անվան ռուսական մանկավարժական ուսումնարան,Հանրակրթական դպրոցի տարրական դասարանների դասավանդում	Գորիսի Ս.Խանզադյանի անվան N6 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ում, որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	3-րդ	90.5	175 000
5.	ԳՊՀ	Հարությունյան Հերմինե Աշոտի	Մեղրու պետական քոլեջ, ՊՈԱԿ-ում, Դասավանդում տարրական դասարաններում	Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ալվանք գյուղի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում,որպես գործավար	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	3-րդ	89.5	175 000
6.	ԳՊՀ	Վանեսյան Սոնա Սիմոնի	ՀՀ Կապանի ճարտարագիտատնտեսագիտական կոլեջ,Հաշվապահական հաշվառում, տնտ. Գործուն.հսկում և վերլ.մասնագիտությամբ	Սյունիքի մարզի Տաթև համայնքի «Նախադպրոցական ուսումնական հաստատություն» -ում, որպես տեսչության ժամանակավոր պատասխանատու	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	3-րդ	89.9	175 000
7.	ԳՊՀ	Մկրտչյան Անի Լյովայի	1993թ.ընդունվել է ՀՊՄՀ Գորիսի մասնաճյուղ, Մեքենաշինության տեխնոլոգիա ֆակուլտետը /վճար չմուծելու պատճառով 4-րդ կուրսի 1-ին կիսամյակից դուրս է մնացել բուհից/	Գորիս համայնքի «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, որպես ռուսաց և անգլերեն լեզվի ուսուցչուհի /ազատվել է աշխատանքից 18.12.2023թ-ին/	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	3-րդ	88.2	175 000
8.	ԳՊՀ	Առաքելյան Գայանե Ազեիվի	Սիսիանի Պետական Հումանիտար քոլեջը, թարգմանչական գործ	Սյունիքի մարզի «Շենաթաղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, որպես դասվար	Ընդհանուր մանկավարժություն,Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	3-րդ	90.3	175 000
9.	ԳՊՀ	Օհանջանյան Կարինե Ռաֆայելի	Սիսիանի Պետական Հումանիտար քոլեջը, թարգմանչական գործ մասնագիտությամբ, Տարրական դասարանների ուսուցիչ	Սյունիքի մարզի «Տորունքի հիմնական դպրոց »ՊՈԱԿ-ում, որպես դասվար	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2024թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	3-րդ	90.3	175 000
10.	ԳՊՀ	Համլիկ Մնացականի Ալեքսանյան	Գորիսի մանկավարժական ուսումնարան, Նախադպրոցական դաստիարակություն	Սիսիանի թիվ 1 ՆՈՒՀ,դաստիարակ	Ընդհանուր մանկավարժություն, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	2025թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	2-րդ	85.55	175 000
11.	ԳՊՀ	Խանում Յուրիի Հակոբյան	Գորիսի մանկավարժական ուսումնարան, Գրադարանային գործ	1994-2023թթ աշխատել է հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ Բարձրավանի միջնակարգ դպրոցում, այժմ նույն դպրոցի գրադարանավարն է	Մասնագիտական մանկավարժություն, Հայոց լեզու և գրականություն	2025թ. 1-ին կիսամյակ,2-րդ կուրս	2-րդ	86.4	160 000
									1 880 000

* Հետագա կիսամյակների ուսման վարձի փոխհատուցումը դադարեցվում է, եթե շահառուն չի ապահովում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60 %-ը